Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

4032

2490

2490

4662

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Հաւաքեալ յումեմնէ բանաւորէ վասն նորա-
վարժ մանկանց.

Ի Հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն Էջմի-
ածնի Տեառն ԵՓՐԵՄԻ Սրբազնակատար
Կաթուղիկոսին ամ՟ Հայոց.

4037

Տպագրեալ ըստ անձնարկութեան Հոգեւոր կառա-
վարչաց.

Յամ Տեառն 1829. յՕգոստոսի 8.

Ի սուրբ Էջմիածնի տպարանս. ընդ հո-
վանեաւ սբ՟ Ա՟ծածնի Առա՟ք Եկեղեցւոյն որ

ՅԱՍՏՐԱԽԱՆ.

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յաւարտ տառից՝ հեգման վան   կից,
Համառաբերման՝ ութ ազգ բա   ռից.
պա՛րտ է սկիզբն՝ առնել բա   նից,
հարկաւորաց՝ քրիստոնէ   լից.
Երեք մասունք՝ են հաւա   տոյ,
յորում հոգւոյն՝ ապրեալ գը   րոյ,
զոր հարկ է մեզ՝ ջանիւ սեր   տել.
և զխորհուրդն՝ քաջ ճանա   չել.
Առաջին մասն՝ է այս յայտ   նի,
ուղղափառացս՝ միշտ պաշտե   լի.
երեք անձինք՝ և մի բնու   թիւն,
աստուածութեամբն՝ ան յոգնա   կի.
Երկրորդն է՝ մարդեղու   թեան,
առնուլ մարմին՝ մեր բընու   թեան.
զոր միացոյց՝ անճառա   պէս,
բանն աստուած՝ յիւր էու   թեան.
Նաև երրորդն՝ եկեղեց   ւոյն,
և եօթնաթիւ՝ սուրբ խորհըր   դոյն.
զորս ուրոյն՝ 'ի միտ առ   նուլ,
ըստ րաբունեաց՝ մեզ մեկնե   լոյն.
Թէ այսոցիկ՝ տեղեկա   ցիս,
լուսով գըրոց՝ վառեալ լի   ցիս.
և ըստ չափու՝ լուսոյ մը   տացդ,
'ի տուն տեառն՝ միշտ փայլե   ցիս.
Որ 'ի հնոյն՝ էր արա   րեալ,
յերկար գըրովք՝ զայն շարադ   րեալ.

Զայս

զայս կարճառօտ՝ հաւաքե ցաք,
դիւրին լիցի՝ 'ի միտ ա ռնուլ.



Մանուկ մըտավարժ՝ և սիրող ուս ման․
մի ընդ վայր լըքցես՝ զեղանակ գար նան․
Զի բողբոջք ծառոց՝ և համայն սեր ման․
անտուատ սկսեալ՝ 'ի կատար փու թան․

# ԿՐԹՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

'Ի ձեւ հարցման եւ պատասխանւոյ.

## Մասն Առաջին։

Հարց։

Դու քրիստոնեա՞յ ես։

Պատասխան։

Այո՛ քրիստոնեայ եմ շնորհօքն Քրիստոսի։

Հ. Զի՞նչ է նշանն քրիստոնէից։

Պ. Սուրբ եւ պատուական խաչն Քրիստոսի։

Հ. Խաչակնքեա՛ զի տեսից թէ ո՞րպէս խաչակնքես։

Պ. Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։

Հ. Ո՞վ ստեղծ զքեզ։

Պ. Աստուած ամենակարողն։

Հ. Վասն է՞ր ստեղծ։

Պ. Վասն այնորիկ՝ զի զինքն ճանաչեցեմ. եւ զկամսն կատարեցեմ եւ վերջապէս արքայութեան արժանաւորեցիմ։

Հ. Զի՞նչ է Աստուած։

Պ. Այ՝ ստեղծող երկնի եւ երկրի՝ երեւելեաց եւ աներեւութից։

Հ. Աստուած քանի՞ է.
Պ. Մի է։
Հ. Աստուածային անձինք քանի՞ք են։
Պ. Երեք են։
Հ. Երից անձանց անուանքն զի՞նչ են։
Պ. Միոյն անունն հայր է, երկրորդին՝ որդի է և երրորդին՝ հոգի սուրբ։
Հ. Ապաքէն հայր աստուա՞ծ է։
Պ. Այո՛ աստուած է։
Հ. Որդին աստուա՞ծ է։
Պ. Այո՛ աստուած է։
Հ. Հոգին սուրբ աստուա՞ծ է։
Պ. Այո՛ աստուած է։
Հ. Ապա ուրեմն երեք աստուածք են։
Պ. Ոչ երեք աստուածք են. այլ՝ մի աստուած և երեք անձինք։

## Մասն Երկրորդ.

Հ. Յայսց երից անձանց ո՞ր անձն մարդացաւ։
Պ. Միայն որդւոյ անձն մարդացաւ։
Հ. Մարդացաւ ասելն զի՞նչ ասել է։
Պ. Մեզ նման կատարեալ մարդ եղև ասել է. մարմին առնլով 'ի մաքուր յարենէ կուսին Մարիամու։
Հ. Մարմին առօղն ո՞վ է։
Պ. Բանն աստուած, որ է միածին որդին։
Հ. Յորո՞ւմ աւուր էառ զմարմինն։
Պ. Յեօթն ապրիլի ամսոյն. որ է օր աւետման։



Հ.

Հ. Զի՞նչ է առեցեալն։
Պ. Հոգի՝ միտք և մարմին. որք են մարդկայինք։
Հ. Առօղն և առեցեալն. զի բանն և մարդկութիւնն զիա՞րդ լինին մի անձն և մի բնութիւն։
Պ. Քանզի բանն Աստուած այնպէս միաւորեաց ընդ անձին և ընդ բնութեան իւրում զմարդկութիւն՝ որպէս մարմին մեր միաւորեալ է ընդ հոգւոյ մերում. և մի բնութիւն եղեալ է ընդ նմա առանց շփոթման. Այնպէս և մարդկութիւն միաւորեցաւ ընդ անձին և ընդ բնութեան բանին Այ. և մի աստուածամարդկային բնութիւն եղև ընդ նմա, առանց շփոթման՝ և առանց փոփոխման. որպէս վկայեն մեր հարքն Աթանաս Կիւրեղ և այլն։
Հ. Յիսուս անունն զի՞նչ անուն է։
Պ. Փրկիչ անուն է. զի փրկեաց զմեզ ՚ի ձեռաց սատանայի, և ՚ի տանջանաց դժոխոց։
Հ. Քրիստոս անունն զի՞նչ անուն է։
Պ. Օծեալ անուն է. վասն զի բանն Աստուած մարդացեալ օծաւ ՚ի Հօրէն Այ Հոգւովն սրբով. որպէս Պետրոս առաքեալն ուսուցանէ Գործ. Ժ։
Հ. Տէրն մեր յո՞ քն յորում աւուր ծնաւ։
Պ. ՚Ի վեցում աւուրն յունվարի ամսոյն։
Հ. Ո՞ւր ծնաւ։
Պ. ՚Ի Բեթղեհէմ Հրէաստանի, ՚ի մսուրն անբանից։
Հ. Յումմէ՞ ծնաւ։
Պ. ՚Ի կուսէն Մարիամայ. որ ՚ի վերն ասացաւ։
Հ. Մարիամ Աստուածածինն կոյս մնա՞ց յետ ծննդեանն։

Պ. Այո՛. վասն զի անսերմն յղացաւ և անապականաբար ծնաւ. և յետ ծնանելոյն կոյս մնաց.

Հ. Քրիստոս ըստ աստուածութեան՝ ծնեա՞լ էր ՚ի Հօրէ.

Պ. Այո՛ ծնեալ էր.

Հ. Ըստ մարդկութեան՝ ծնա՞ւ ՚ի մօրէ.

Պ. Այո՛ ծնաւ.

Հ. Առաջին ծնունդն ո՞րպէս էր.

Պ. Անժամանակ և անմարմին՝ ծնունդ առանց մօր:

Հ. Երկրորդ ծնունդն ո՞րպէս էր.

Պ. Ժամանակեայ և մարմնով, ծնունդ առանց հօր:

Հ. Քանի՞ ամաց էր Քրիստոս յորժամ եկն ՚ի մկրտութիւն.

Պ. Երեսնամեայ էր՝ ըստ վկայութեան Ղուկասու աւետարանչին.

Հ. Յորո՞ւմ ամսեան մկրտեցաւ.

Պ. ՚Ի վեցն յունվարի ամսոյն՝ յորում աւուր ծնեալ էր ՚ի կուսէն՝ ծնաւ մկրտութեամբ և ՚ի Յորդանանէ յօրինակ մեզ. և զի երկոքին ծնունդ են, թէպէտ և զանազանեալ են ՚ի միմեանց խորհրդեամբ և ժամանակաւ. ուստի վկայեն բազում սուրբ հարք, մանաւանդ սուրբն Ներսէս շնորհալի հայրապետն մեր:

Հ. Յումմէ՞ մկրտեցաւ Քրիստոս.

Պ. ՚Ի Յովհաննէ որդւոյն Զաքարիայի և Եղիսաբեթի:

Հ. Ո՞ւր մկրտեցաւ.

Պ. ՚Ի գետն Յորդանան:

Հ. Զի՞նչ սքանչելիք եղեն անդ:

Պ. Հայրն ամենակալ ձայնիւն և հոգին սուրբ իջմամբն յայտնեցին զՔ՟ի ա՟ծութիւն. վ՟նյ օր ծննդեան և մկրտութեան կոչի և օր յայտնութեան.
Հ. Ք՟ս ՚ի քանի՞ ամ շրջագայեցաւ ՚ի վ՟ր երկրի.
Պ. Երեսուն և երեք տարի և կէս.
Հ. Յայնքան ժամանակս զի՞նչ արար.
Պ. Ուսոյց հետևողաց իւրոց զճանապարհն ճշմարտութեան.
Հ. Յետ այնքան ժամանակի կատարմանն զի՞նչ արար.
Պ. Եկն կամաւ ՚ի չարչարանս, խաչեցաւ, և մեռաւ վ՟ն մեր՝ ը՟ս առաքելոյն թէ Ք՟ս մեռաւ վ՟ն մեղաց մերոց և՟ն.
Հ. Ո՞ւր խաչեցաւ և մեռաւ.
Պ. ՚Ի լերինն գողգոթայ՝ մերձ ՚ի քաղաքն երուսաղէմ.
Հ. Վասն է՞ր մեռաւ.
Պ. Վասն փրկութեան մերոյ.
Հ. Յորո՞յ վերայ մեռաւ.
Պ. ՚Ի վերայ խաչափայտին.
Հ. Եթէ Ք՟ս ա՟ծ էր՝ զիա՞րդ մեռաւ.
Պ. Ո՛չ ասեմ թէ ա՟ծային բնութ՟բն մեռաւ, այլ՝ առեալ մարմնոյն, որ անճառելի միաւորութ՟բն, վ՟նյ և ասի՝ ա՟ծ խաչեցաւ և մեռաւ.
Հ. Զկնի մահուանն զի՞նչ արարին զմարմինն Ք՟ի.
Պ. Իջուցին ՚ի խաչէն՝ եդին ՚ի նորափոր գերեզմանի, անբաժանելի ա՟ծութ՟բն.
Հ. ՚Ի քանի՞ աւուրս մնաց ՚ի գերեզմանի.
Պ. Յերիս աւուրս.

Հ. Ո՞ւր էջ ՚ի դժոխս։
Պ. Բանական հոգւովն։
Հ. Յորժամ էջ ՚ի դժոխս զի՞նչ արար։
Պ. Աւերեաց զդժոխս, և ազատեաց զհոգիսն որք էին ՚ի բանտին։
Հ. Յորում աւուր յարեաւ քն։
Պ. Յետ երից աւուրց մահուան իւրոյ։
Հ. Զի՞նչ արար յետ յարութեն։
Պ. Երեւեցաւ կանանցն իւղաբերից. և այլ աշակերտաց իւրոց և սրբոց առաքելոց։
Հ. ՚Ի քանի՞ աւուրս մնաց յերկրի յետ յարութեն։
Պ. ՚Ի քառասուն աւուրս։
Հ. Եւ յետոյ զի՞նչ։
Պ. Համբարձաւ փառօք յերկինս ՚ի լերանէն Ձիթենեաց՝ յանդիման աշակերտաց իւրոց. խոստացեալ միւսանգամ գալ ՚ի դատել զծս։
Հ. Ի՞բ ատուցեաց զխոստումն իւր։
Պ. Առաքելով զհոգին սբ կենդանարար՝ զաւետիքն հօր՝ ՚ի պենտեկոստէի յաւուր յիսներորդի ՚ի լրութեն սինէական պատգամացն՝ որ տուաւ իսրայէլի։

## Մասն Երրորդ։

Հ. Զի՞նչ է սբ եկեղեցին։
Պ. Եկեղեցին է ժողովումն ամ հաւատացելոց քրիստոնէից. որք միաբանեալ են յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

 Հ.

Հ. Զի՞նչ է խորհուրդ եկեղեցւոյ.
Պ. Է ազատութիւն հոգևոր.
Հ. Քանի՞ են.
Պ. Եօթն են.
Հ. Զի՞նչ են.
Պ. Մկրտութիւն. Դրոշմ. Հաղորդութիւն. Ապաշխարութիւն Պսակ. Ձեռնադրութիւն. և Վերջին օծումն.
Հ. Մկրտութիւն զի՞նչ է.
Պ. Է լուացումն արտաքին մարմնոյ. և մաքրումն ներքին հոգւոյ. և ազատութիւն յսկզբնական մեղաց.
Հ. Դրոշմն զի՞նչ է.
Պ. Է հաստատուն խորհուրդ 'ի հաւատս քնի և կնիք ճանաչման որ տուեալ լինի առ 'ի զօրացուցանել և քաջացուցանել զմարդն. և լինել զինուոր քրիստոսի.
Հ. Հաղորդութիւն զի՞նչ է.
Պ. Է մարմին և արիւն տն մերոյ յնի քնի, և կերակուր հոգևոր որ և վերջապէս տայ մեզ ժառանգել զկեանս յաւիտենականս.
Հ. Ապաշխարութիւն զի՞նչ է.
Պ. Է զանցեալ չարեաց լալ, և զլալի երբ մի ևս գործել. կամ դարձումն 'ի մեղաց, և դառնալ վերստին զկորուսեալ շնորհսն.
Հ. Քահանայութիւն զի՞նչ է.
Պ. Է հոգևոր իշխանութիւն իմն. որով կարող է մատուցանել զպատարագ՝ նաև զայլ խորհուրդս կատարել.


Հ.

Հ. Պատճառն զի՞նչ է.

Պ. Այս խորհուրդ եկեղեցւոյ, որ 'ի բաց բառնայ զշնութիւն եւ զպոռնկութիւն. եւ անլուծանելի կապանօք կապէ զայրն եւ զկինն ընդ իրերարս, մինչ փրկութեան իւրեանց. ծնանել եւ մնուցանել զորդիս 'ի պաշտօն Այ.

Հ. Զի՞նչ է վերջին օծումն.

Պ. Այս խորհուրդ եկեղեցւոյ, որ կացուցեալ է առ 'ի սրբել զներելի մեղս.

Հ. Եկեղեցին մեր ունի՞ զխորհուրդս զայս.

Պ. Այո՛ ունի. բայց 'ի մկրտութեան ընդ դրոշմին տայ նմա մկրտելոց.

Հ. Վասն է՞ր այսպէս.

Պ. Վա՛ զի կացուցեալ է խորհուրդս այս 'ի սրբել զներելի մեղս, ոչ խոստովանութեան զմահացուն. իսկ ումանք այսու յուսով զխոստովանութիւն բառնային, ոչ այլ ազգք ումանք բարձեալ են. ուստի՝ հարկ եղեւ մեզ հարցն մերոց կցել զսա ընդ դրոշմին. զի մի՛ այսու յուսով բարձեալ լիցի խոստովանութիւն.

Հ. Զո՞յ այլ պատճառ կցելոյ ընդ դրոշմին զայս խորհուրդս.

Պ. Այո՛ 'ի բարձման Թագաւորութեան հայոց ժողովուրդք մեր տարագրեալ եղեն յաշխարհէ մերմէ ընդ տիեզերս. եւ բազումք 'ի մէջ դերութեան, 'ի ձեռս անհաւատից մեռանէին՝ առանց քահանայի. ուստի սահմանեցին սուրբ հարքն մեր 'ի մկրտութեան ընդ դրոշմին տալ զօծումն զայս, զի մի զրկեսցին 'ի սմանէ. այլ



իբրեւ

երբեւ զդեղ նախապահպանողական ամենե-
քեան ունիցին առ ինքեանս.

Հ. Ապա՝ քահանայից վերջին օծումն զի՞նչ է.

Պ. Պատիւ է քահանայութեան կարգին.

Հ. Յումմէ՞ ընկալաւ եկեղեցին մեր զայս.

Պ. 'Ի սրբոյն Դիոնեսիոսէ արիսպագացւոյն. որ 'ի գիրս յաղագս եկեղեցական քահանայապետութեան 'ի գլուխ Է. 'ի մասն Ը. ասէ՝ թէ առաքելական աւանդութիւն էր զսրբազան ննջեցելոյն օծանել:

Հ. Առաքինութիւն զի՞նչ է.

Պ. Ունակութիւն մտաց՝ զոր ընդունի հոգին եւ լինի բարեգործ: Եւ բաժանի յեօթն տեսակս.

Հ. Զի՞նչ են անուանք տեսակացն առաքինութեան.

Պ. Հաւատ. Յոյս. Սէր. Արիութիւն. Արդարութիւն. Խոհեմութիւն. եւ Ողջախոհութիւն.

Հ. Հաւատն զի՞նչ է.

Պ. Պարգեւ մի հեղեալ 'ի մեզ յԱյ. որով ճանաչեմք զԱծ արարիչ արարածոց, եւ Թագաւոր ամենազօր.

Հ. Յոյսն զի՞նչ է.

Պ. Աներկբայ ակնկալութիւն հաւերժական բարեացն՝ զոր տալոց է Ած առաքինեաց՝ յաւուրն հատուցմանն.

Հ. Սէրն զի՞նչ է.

Պ. Ունակութիւն մտաց. որով սիրեմք զԱծ՝ վն բարերարութեանն. եւ զընկերս մեր հաւասար մեզ՝ վն Այ.

Հ. Արիութիւն զի՞նչ է։
Պ. Է տոկալն ընդդէմ փորձութեանց չարի և տանել կամ համբերելն զժուարին կրից։
Հ. Արդարութիւն զի՞նչ է։
Պ. Է հաւասարակշռութիւն ՚ի մէջ հոգւոյ և մարմնոյ և զինչս այլոց ոչ ինչ իւիք իւրացուցանել։
Հ. Խոհեմութիւն զի՞նչ է։
Պ. Է ընտրելն ընդ մէջ բարւոյ և չարի. նաև չխաբել զոք և չխաբել յումեքէ։
Հ. Ողջախոհութիւն զի՞նչ է։
Պ. Է ՚ի բաց մերժելն յինքենէ զամ մարմնական հեշտութիւնս՝ որք պատահին։
Հ. Քանի՞ են պարգևք հոգւոյն սրբոյ։
Պ. Եօթն են. ք՝ Իմաստութիւն. Հանճար. Խորհուրդ. Զօրութիւն. Գիտութիւն. Ածպաշտութիւն և Երկիւղ այ։
Հ. Քանի՞ են գործք մարմնաւոր ողորմութեան որք ՚ի յիշատակ գան յաւուրն դատաստանի։
Պ. Եօթն են. ք՝ Կերակրել զքաղցեալս. Արբուցանել զծարաւիս. Զգեցուցանել զմերկս. Ժողովել զօտարս. Տեսանել զհիւանդս. Այց առնել բանտարկելոց. և Թաղել զմեռեալս։
Հ. Հոգևոր ողորմութիւնք ևս քանի՞։
Պ. Նոյն կան. և են Է. ք՝ Խրատել զերկմիտսն. Առաջնորդել տգիտաց. Աշտամբել զմեղաւորս. Մխիթարել զտրտմեալս. Թողուլ զպարտս. Յանձն առնուլ զվիշտս և աղաչել զած վն կենդանեաց և մեռելոց և վն մեղաց։

Հ. Քանի՞ են օրինացն բանք. և 'ի ձեռն որո՞յ են տուեալ։

Պ. Տասն են բանք օրինացն Այ. և 'ի ձեռն Մովսէսի ետ 'ի Սինայ լերին։

Հ. Ասա մի ըստ միոջէ՝ զի լուայց։

Պ. Նախ՝ Ես եմ Տր Այծ քո. և մի՛ եղիցի քեզ այլ Այծ բաց յինէն. և մի՛ դիցես զանուանն Այ քո 'ի վերայ սնոտեաց. Երկրորդ՝ մի արասցես քեզ կուռս ըստ ամի նմանութ. յերկինս 'ի վեր, և յերկիր 'ի խոնարհ. Երրորդ՝ յիշեա՛ զի սրբեսցես զօր շաբաթուն որ մեզ կիրակէ. Չորրորդ՝ պատուեա՛ զհայր քո և զմայր քո. Հինգերորդ՝ մի՛ սպանաներ. Վեցերորդ՝ մի՛ շնար. Եօթներորդ՝ մի՛ գողանար. Ութերորդ՝ մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ. Իններորդ՝ մի՛ երդնուցուս սուտ յանուն Տն Այ քո. Տասներորդ՝ մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո՝ և մի՛ տան նր. և մի՛ ընչից նր. և մի՛ ամ՛ երայ՝ որք նր՝ իցեն։

Հ. Քանի՞ են ազգ մեղաց։

Պ. Երկու. այ՝ Սկզբնական և Ներգործական։

Հ. Զի՞նչ է սկզբնականն և զի՞նչ ներգործականն։

Պ. Սկզբնականն 'ի հօրէն մերմէ յադամայ սերեալ ունիմք ամէն. որ և ջնջի մկրտութբ. Իսկ՝ յետ մկրտութեան արարեալ մեղք ասին ներգործական։

Հ. Ներգործականն 'ի քանի՞ս բաժանի։

Պ. Յերիս. այ՝ 'ի Մահացու, 'ի Ներելի և 'ի Փոշետեսակ։

Հ. Զի՞նչ են մահացու մեղք։

Պ. Են այնք՝ որք զհոգիս բոլորովին մահացուցանեն։

Հ. Ներելի և փոքրատեսակն զի՞նչ են։

Պ. Այնոքիկ են՝ զորս թէ ով գործեալ մեռասցի, կամ թեթևապէս կրեսցէ զապաշխարանս, կամ լիապէս ոչ կատարեսցէ, ներէ նմա․ վասն զի ներելի և փոքրատեսակ այն թեթևագոյն մեղք․ որ և անուանքն պարզապէս յայտնեն։

Հ. Մահացու մեղք քանի՞ են։

Պ. Եօթն են․ այս է՝ Հպարտութիւն․ Նախանձ․ Բարկութիւն․ Ծուլութիւն․ Ագահութիւն․ Որկրամոլութիւն և Բղջախոհութիւն․

Հ. Գո՞ն է մոլութեցս այսոցիկ ընդդիմաբաժանեալ առաքինութիւնք։

Պ. Այո՛ կան․ և են եօթանեքեան այսքա․ այս է՝ Խոնարհութիւն՝ ընդդէմ Հպարտութեան․ Բարեհաճութիւն ընդդէմ Նախանձու․ Հեզութիւն ընդդէմ Բարկութեան․ Առատասրտութիւն ընդդէմ Ագահութեան․ Արիութիւն ընդդէմ Ծուլութեան․ Պահեցողութիւն ընդդէմ Որկրամոլութեան․ Ողջախոհութիւն ընդդէմ Բղջախոհութեան։

Հ. Սոսկալիք կամ յԱյ վրէժխնդիր մեղք ո՞յք են։

Պ. Չորքս այսոքիկ՝ Անմեղ սպանումն․ Արուագիտութիւն․ Զրկանք աղքատաց․ և Հատանել զվարձս մշակաց։

Հ. Քանի՞ կերպիւ մեղանչէ ոք։

Պ. Երեք․ այս է Խորհրդով․ Բանիւ և Գործով։

Հ. Մեկնեա՛ մի ըստ միոջէ՝ զի իմասցուք:

Պ. Խորհրդով մեղանչել ասի՝ յորժամ՝ի սրտի մերում զչարիս խորհիմք, հաւանիմք և ախորժիմք. բանիւն այն է, մինչ ստաբանութեամբ՝ բամբասանս՝ անէծս՝ և պէսպէս հայհոյանս խօսիմք. իսկ գործովն է՝ մինչ ձեռօք կամ ոտիւք կատարեմք և այլն.

Հ. Քանի՞ք են ահացուցիչք մարդկան. և խորշեցուցիչք ՚ի մեղաց.

Պ. Չորք են. որ՝ Մահ անողորմ. Դատաստան ահեղ. Դժոխք սարսափելի. և Արքայութիւն անձառ.

Հ. Միայն ուղղափառ դաւանութեամբ, և զհաւատոյ մասունս՝ և զայլ հանգամանս քաջ ճանաչելով փրկութիւն կարեմք հասանել.

Պ. Ո՛չ առանց գործոց հաւատք՝ և ո՛չ առանց հաւատոյ գործք փրկեն. վասն զի ըստ առաքելոյն մինն առանց միւսոյն՝ միշտ մեռեալ ասի:

Հ. Ո՞յք են բարի գործք՝ և քանի՞ք.

Պ. Եօթն զոյգ առաքինութեանց, եօթն զոյգ ողորմութեանց, ընդ որս են աղօթք և պահք:

Հ. Զքնի տեառն մերոյ մեզ աւանդեալ տէրունական աղօթսն ասա զի լուիցուք.

Պ. Հա՛յր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս՝ և յերկրի. Զհաց մեր հանապազորդն տո՛ւր մեզ այսօր. և թո՛ղ մեզ զպարտիս մեր. որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր

 զմեզ

զմեզ 'ի փորձութենէ. այլ՝ փրկեա 'ի չարէ: Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

Հ. Ասա՛ 'ի դէմս սրբուհւոյ աստուածածնին սահմանեալ զաղօթսն.

Պ. Անկանիմք առաջի քո տիրամայր որ ծնածէն. և աղաչեմք զանարատ զկոյսդ: Բարեխօսեա վասն անձանց մերոց. և աղաչեա զՄիածին որդիդ. Փրկել զմեզ 'ի փորձութենէ. և յամենայն վտանգից մերոց:

Ընդ որ նշորտէմս զաղօթս Սիմէօնի ծերունւոյն.

Ով արձակիչդ ես կապելոց՝ պարգևատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և զիս զբազմամեղս 'ի կապանաց մահու 'ի կեանս յաւիտենից. ամէն:

Հ. Յորժամ քահանայն ասէ զառէք կերայք՝ դու զի՞նչ ասել պարտիս:

Պ. Զաղօթս զայս. Օրհնեալ է պարգևատուն կենաց, և պարգևն անմահութեան ՔՍ ԱԾ մեր:

Հ. Յորժամ ասէ զարբէք 'ի սմանէ զի՞նչ ասել պարտիս.

Պ. Օրհնեալ է շնորհն ձրի, և պարգևն անծախելի՝ կենդանի և կենդանարար մարմին և արիւն քրիստոսի այ մերոյ:

Հ. Յորժամ 'ի սրբութիւն սրբոցն ասասցէ, զի՞նչ պարտիս ասել:

Պ. Զաղօթս սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին. Զերևեալդ ինձ 'ի փրկութիւն խա֊

 տա

առուանիմ ճշմարտապէս մարմին և արիւն քո ի յոյ
յուսոյ իմոյ. և աղաղակեմ առ քեզ՝ մեղայ յեր-
կինս և առաջի քո. Սրբեա զիս յամենայն պղծութենէ
հոգւոյ և մարմնոյ. շնորհեա ինձ ժամանակ և
ցանկութիւն ապաշխարութեան. փրկեա զիս յերևելի և
յաներևոյթ թշնամեաց. պարտաւորեա զօգուտ հոգ-
ւոյս և մարմնոյս. Պարգևեա ինձ բարեկրօնութիւն
և բարեպաշտութիւն զքեզ արժանապէս ճաշակել,
և փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

* Ի հոգեւորս Թադէոս հրաշաբան Վարդապետէ Սա-
րուխեան Աստուածաբանութեան շարագրեալ համառօտ
երգս նորաձայն մանկանց Պարսկաց, ՚ի ւերնել յետամ-
բաձու առ եկեղեցին երկրային, առ գերեզմանին ազատագա-
րութեան, և հուսով առ աստուած կենաց փառաց ՚ի մշտնջե-
նական փառաւորութիւն ամենայն երկրաւորութեան՝ հօր և
որդւոյ և սրբոյ հոգւոյն.

Տէրունական՝ ազդու բանի.
Լեր ունկնդիր՝ ո՛վ պատանի.
Որով յեթերս՝ օթարանի.
Ուղիղ առ հ քեզ՝ բացեալ լինի.
Խոնարհ լեր դու՝ հոգւով յանձ.
Որոյ ձեռաց՝ ես ստեղծուած.
Զի մինչ էիր՝ տերեւս փած.
Գթով դարձեալ՝ յեդեմ եկած.

Ամենայն ոք զորդիական երկիւղն պարտի ունիլ առ ած՝ զհրամանս նր կատարելով, և հեռանալով 'ի մեղանչմանէ՝ 'ի յօժարութէ, և յաւանելոյ զայն՝ որ ընդդէմ է հրամանի նորին.

Իսկ զայս հոգևորական երկիւղ հարկ է յայտնել ըստ առաքելոյն՝ արտաքին նշանօք և գործովք.

Նախ՝ յեկեղեցւոջ ընդ նմ քրիստոնեայ եղբարց առաջի ամենատեսին այ յայտնելով զհնազանդութն և զխոնարհութն յաղօթսն. Ճշմարտապէս երևեալ աղքատ և կարօտ ողորմութն՝ բարութն և խնամութն այ, ընդ որոյ բերանալիր գոհութն մատուցանել նմա, զի յոչընչէ գոյացոյց զմեզ՝ մարդասիրաբար 'ի պատկեր բարութն իւրոյ և մինչ 'ի մեղս գլորեցաք, վերստին փրկեաց զմեզ 'ի կապանաց սատանայի՝ արժանացոյց որդէգրութն հրն շնորհօք իւրովք՝ 'ի ձեռն որդւոյն միածնի:

Այլ՝ հարկ է իւրաքանչիւրոյ 'ի քն հաւատացելոց յանձնել զինքեանս և զամենայն նմա միայնում՝ որ գիտէ զպէտս մեր և զկարիս՝ առաւել քան զոր խնդրեմք և իմանամք.

Երկրորդ՝ 'ի մէջ վարժարանի զճշմարիտ որդիական մեծարումն դաստիարակի ցուցանել. պատուել զնա ոպ զհայր, և խոնարհադէմ հարցմամբ խնդրեալ 'ի նմանէ լուծումն տարակուսանաց. և զհոգեշահ խրատ 'ի լուսաւորութն ամենընդունակ մտաց. և հնազանդութբ պատրաստ լինել 'ի կատարումն նր անմեղադրելին հրամանաց բազմերախտ ուսուցչին իւրեանց.

Ջ է որ 'ի մանկութենէ՝ ոչ կորացուսցէ զպարանոց իւր առ հրամանս դաստիարակի, 'ի պատանեկութեան իւրում ոչ խոնարհի իշխանաց, 'ի յերիտասարդութեան՝ ոչ կարէ ունել զփառաւորութիւն և զքաղաքացիս. ոչ 'ի ծերութեան՝ զշնորհս կառավարութեան. և ոչ զայս հաճոյարար կատարելութիւն՝ 'ի յամենայն կեանս իւր. ուստի՝ Երրորդ 'ի ժամու աղօթութեան 'ի գնալ աշակերտաց 'ի տուն՝ չէ պարտ շրջագայել և զբօսնուլ 'ի շուկայս և 'ի փողոցս. այլ ուղղակի և համեստ ընթացիւք դիմել առ ծնողսն. որք յետ ծննդեան՝ բազմադիմի տառապանակրութեամբ սնուցեալ՝ և 'ի հասակ ուսման և կրթութեան՝ (և տն նախախնամութեան) հասուցեալ, յանձնեալ են ապահովութեան դպրոցի. ուրանօր մտացեալ զլուսանանման փափկամութիւնս, ստանալոց են զարփիաւալից հաստատութիւն մտաց և վարուց. և որ 'ի նշան մեծի շնորհակալութեան՝ պարտին համբուրել զձեռն նոցա.

Չորրորդ՝ 'ի ճաշու կամ յընթրեաց ժամու նախ քան զբազմիլն իւրեանց՝ հարկ է առնել զտէրունական աղօթս, և սպասել բազմելոյ մեծաց. յետ որոյ նստել 'ի պատշաճաւոր տեղիս. և միշտ համեստութեամբ զգոյշ լինել զինքեանս, զի մի՛ գուցէ անսանձաբար յառաջ քան զբազմականն ձգեսցին զձեռն 'ի սեղանն, որով և տն արժանւոյն զատապարտեսցին. և որում դիտէին զկանոնս քաղաքավարութեան. և ոչ պահեսցին.

Նոյնպէս պահպանել 'ի գինւոյ՝ յօղւոյ և յայլ արբեցուցիչ ըմպելեաց. որք են և ամի վնասա-

կար ո՛չ միայն նորոգ հերկագործեալ և զսերմն իմաստութեան ընկալեալ բանեղէն զօրութեան միայն՝ երևակայութեանն և յիշողականութեան իւրեանց, այլ և խորշակահար ցամաքեցուցիչ, և առաւօտու որդն՝ դդմենանման առողջութեան ծաղկեալ հասակաց նց· որք են հովանի գլխոց յովնանատիպ ծնողաց իւր-եանց։ Իսկ ընդ յառնելն 'ի սեղանոյ՝ կրկնել զտէրունական աղօթքն 'ի գոհութի· խոնարհութ և սիրով համբուրեալ զձեռս տածիչ և սնու-ցիչ ծնողացն։

Վերջապէս՝ 'ի ժամու ննջման պա՛րտին նա-խապէս դառնալ յարևելս, և աղօթս մատու-ցանել այ յանձնելով զինքեանս պահպանողութեն նր· զի ազատ եղիցին 'ի գիշերայն արհաւրաց և ազգս փորձութեց· յետ որոյ պարկեշտութ մերկա-ցեալ զհանդերձս, ընկողմնիլ յանկողինս իւրեանց։ Եւ արդ՝ պա՛րտ է իւրաքանչիւր ուսումնականաց զկանոնս զայսոսիկ ունել 'ի դպրոցի՝ կենցա-ղավարել ըստ այսմ օրինակի· զի 'ի ժամանակս կատարելութեան իւրեանց իրաւամբք ասասցեն ա-նկզբնաբուղխ աղբիւրն այ բարեաց՝ թէ 'ի քեզ անկեալ եմ յարգանդէ, յորովայնէ մօր իմոյ դու

ես ած իմ։

Արդա՛ր է յոյժ՝ ածային՝ դատաս տան.
պահել զմեզ՝ 'ի գիշահոջ՝ յաշուք տան.
ուր տքնութեամբ՝ կրթեալ լիք՝ 'ի մարդա բան.
յուսալ հասցուք՝ յարքունական՝ պայա բան։